

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝

Է. Մանգրյան

Դևի

«30»

08.

2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍԴԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ



«ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Ս. Շահումյանի անվան

թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 4-րդ «Բ» դասարան

/ուսումնական հաստատության անվանումը, դասարան/

ՆԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ

/դասղեկի անունը, հայրանունը, ազգանունը/

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

4-րդ Բ դասարանում սովորում է 32 աշակերտ՝ 14 աղջիկ, և 18 տղա: Դասարանում կա մեկ ներառված աշակերտուհի: Նրան աշակերտները սիրով օգնում են և ուշադիր են: Բոլորը ապահովված են դասագրքերով: Դասարանում սովորում են տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ: Դասարանում տիրում է համերաշխ մթնոլորտ: Երեխաներից շատերը հաճախում են տարբեր խմբակներ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

Դասարանում սովորողների մեջ սերմանել համերաշխություն և կարգապահություն, լինել ընկերասեր, հարգել մեծերին և միմյանց:

Անցկացնել ծնողական ժողովներ՝ քննարկել դասերի ընթացքում առաջացած մության, կարգապահության հարցերը:

Կանխել բացակայություններն ու ուշացումները, հետևել դպրոցում գործող կարգ ու կանոնի պահպանմանը: Մեծ ուշադրություն դարձնել ցածր առաջադիմություն ցուցաբերող աշակերտներին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Երեխաներին ծանոթացնել եկեղեցիական տոներին, կարևորել եկեղեցու դերն ու նշանակությունը յուրաքանչյուրիս կյանքում: Կազմակերպել էքսկուրսիա մոտակա հոգևոր կենտրոն՝ հանդիպել հոգևորականի հետ, ով մանրամասն կբացատրի յուրաքանչյուր տոնի խորհուրդն ու նշանակությունը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտներին սովորեցնել ամեն ինչի մեջ տեսնել գեղեցիկը, լավը, բարին:
Գեղագիտական դաստիարակության միջոցով օգնել աշակերտներին տեսնելու և գնահատելու բնության գեղեցկությունը: Այցելել թանգարան պատկերասրահ և թատրոն:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ծանոթացնել մեր հայրենիքի պատմությանը, մշակույթին: Ներկայացնել ազգային հերոսներին և նրանց կատարած սխրանքներին:

Զրուցել հայրենիքի խաղաղության, պաշտպանության մասին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Երեխաներին սովորեցնել առողջ ապրելակերպի կանոնները:

Կարևորել մարմնամարզության դերը:

Հետևողական լինել երեխաների նստելու դիրքին՝ գրելու և կարդալու ժամանակ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտներին ներգրավել դասարանական տարբեր աշխատանքներում:

Իրենց տարիքին համապատասխան աշխատանքներ կատարել տանը, դպրոցում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Երեխաները տեսնեն և գնահատեն բնության գեղեցկությունը և հասկանան, որ դրա պահպանումը կախված է իրենցից :

Անցկացնել զրույց բուսական և կենդանական աշխարհի պահպանման անհրաժեշտությունը:

3.7 Դպրոց ընտանիք կապը

Դպրոց-ընտանիք կապը մեծ նշանակություն ունի թե՛ երեխայի դաստիարակության հարցում, թե՛ ուսումնական գործունեությունը կազմակերպելիս:

Անցկացնել ծնողական ժողովներ:

Հաճախ հանդիպել ծնողներին և քննարկել սովորողներին հուզող հարցերը:

Կարևորել երեխայի դաստիարակությունը դպրոցում և տանը:

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
Սեպտեմբեր	Գիտելիքի օր		
	Դասագրքերի բաշխում		
	Ծնողական ժողով		
	Դասարանական անկյան ձևավորում		
Հոկտեմբեր	Խոսել կրթության կարևորության մասին՝ հարգանք ձևավորել ուսման, դպրոցի և ուսուցչի նկատմամբ:		
	Այցելություն «Էյ Թի Փի » բնապահպանական կենտրոն:		
Նոյեմբեր	Այցելել այգի «Հեքիաթային աշունը » դիտելու համար:		
	Միջոցառում «Մկրտիչ Կորյուն»:		
	Պատրաստել փոքրիկ տեսաֆիլմ ներկայացնելով կատարած բարի գործերը:		

Դեկտեմբեր	Ցուցաբերել հոգատարություն, օգնություն ձմեռող թռչունների համար:		
	Պատրաստել պաստառ «Ընկերասիրություն և համերաշխություն » թեմայով:		
	Ներկայացնել երկրաշարժից պաշտպանվելու կանոնները և դիտել տեսաֆիլմ:		

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
Հունվար	Ներկայացնել տեղեկություններ ազգային հերոսների մասին, պատրաստել բացիկներ		
Փետրվար	Ընթերցել և քննարկել Հովհաննես Թումանյանի հեքիաթները:		
	Այցելություն կենտրոնական գրադարան:		
Մարտ	Դասասենյակը ձևավորել գարնան շնչով:		
	Պատրաստել բացիկ մայրիկների տոնին ընդառաջ:		

	«Աուրբ Զատիկի» խորհուրդն ու նշանակությունը ներկայացնել:		
Ապրիլ	Այցելել եկեղեցի՝ հանդիպում հոգևորականի հետ, ով կներկայացնի տաղավար տոները		
	Կատարել ծառատունկ:		
	Խնամել դպրոցամերձ հողատարածքի ծառերն ու ծաղիկները:		
Մայիս	Տարեվերջյան ավարտական միջոցառում:		
	Կատարել գործնական պարապմունք երթևեկության մասին:		

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	ծանոթություն
01.09	Գիտելիքի և դպրության օր	
08.09	Օրվա ռեժիմի ճիշտ պահպանումը	
15.09	Ընկերասիրություն, կարգապահություն	
22.09	Հայաստանն իմ հայրենիքն է	
29.09	Կարգապահություն, հիգիենա	

06.10	Մենք և մեր քաղաքը: Վանաձորի օր	
13.10	Տոնդ շնորհավոր սիրելի՛ ուսուցիչ	
20.10	Մեր դպրոցի ճանապարհը և նոր երթուղիները	
03.11	Հրաժեշտ աշնան գույներին	
10.11	Գիրքը անփոխարինելի ընկեր է	
17.11	Միջոցառում՝ «Մկրտիչ Կորյուն»	
24.11	Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում	
01.12	Ինչպե՞ս օգնել անպաշտպան թռչուններին	
08.12	Մեծ աղետ 35 տարի առաջ	
15.12	Օգնենք միմյանց	
22.12	Պատրաստվում ենք Ամանորին	
12.01	Ընկերասիրություն, համերաշխություն	
19.01	Սովորողների տեղաշարժը խմբերով և շարասյուներով	
26.01	Եղի՛ր կարգապահ	
02.02	Իմ սիրած զբաղմունքը	
09.02	Աշակերտների տեղափոխումը բեռնատար ավտոմեքենայով	
16.02	Գիրք նվիրելու օր	
23.02	Լեզուն մեր ազգային զենքն է	
01.03	Դիմավորում են գարունը	
15.03	Վարորդի նախազգուշացնող ազդանշանները	
22.03	«Սուրբ Զատիկ»-ի խորհուրդն ու նշանակությունը	
05.04	Հանդիպում հոգևորականի հետ	
12.04	Խնամքով օգտագործել դասագրքերը	
19.04	«Հայոց մեծ եղեռն»	

26.04	Ավտոմեքենայի և մոտոցիկլների հատուկ ազդանշաններով սարքավորել	
03.05	Ի՞նչ է խաղաղությունը	
10.05	Գործնական պարապմունք հատուկ գծանշված հրապարակում	
17.05	Հաղթանակների մայիս	
24.05	Ուսումնական տարվա ամփոփում	